

# ՄԱՍԵՆԱԽՈՍՈՒԻԹԻՒՆ

Յ1) Բ. ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆՅՅ. Տարածամ Պատկ. պօհմա Ղազախի  
զիւղական կեանքից. Հրատարակութիւն Գ. Զ. Խարալեանցի. Թիֆլիս,  
1901 թ., 48 էր., գինը 10 կուգ.

Այս «պօէմայի» բովանդակութիւնը հետեւալն է. տասներկու տարեկան մի որբ աղջկան (Եաթէլ) զօռով մարդու են տալիս «չորս անգամ մեծ» Աղատին: Եօթ տարի դժբախտ կեանք վարելուց յետոյ Նաթէլը փախչում է մարդու անից մի երիտասարդի հետ: «Կնիկորուս մարդը» դիմում է մօլլին, որ սա գիր անի և ստիպէ Նաթէլին սիրել իր ատած մարդուն: Մօլլի գիրը չէ օգնում: Ազատը դիմում է գործակալ քահանային: Բայց «տարիին ու կեանքը Նաթէլին կրթելայ (?)», չունէր նա սրտում ոչ վախ և ոչ դարդ (?)» և նա «մերժում էր լինել կինը Ազատի»: Նա զգացել է,

Որ ամուսնութեան պատճառն է տարիանք...

Որդենութիւն՝ բնական հետեւանք...

Երկու բանիցն էլ անշնորհք զանուեցալ...

Նախ վեց ձիգ ամիս եւ հիւանդացալ,

Երկրորդ՝ եօթն տարում որդի չձնալ:

Վճռել եմ արդէն հէնց ալստեղ մեռնել,

Բայց չեմ ցանկանալ նրան կորակցել.

Այն ևս գիտեմ իրատմնք ունեք

Բռնի ստիպելով մօտը ուղարկել:

Բայց կա'մք ունեցեք ինձ հաաստալու,

Որ առաւտեան յետ ենք կանչելու,—

Երկար շուրջառովիդ կատարելու կարգ

Հողին յանձնելու իմ սասած դիմակ...

Թէ Ցէրը երկնից, մեր մեծ Դաստավար:

Հարցնէ բացատրանք մեդքերիս համար՝

Կըպատմեմ նորան խօսքով սրտարուխ,

Մատնացոյց կանեմ ձե՞զ, ո՞վ սեազլուխ,

Որ անխղճարար հոգին ու մարմին

Վաճառած ունիք ժանոտ մամոնային,

Ինձ օրս զեց տարածամ պատկ,

Վարքս անարատ դարձրիք անառակ...

Ապա Նաթէլը իւեղդում է իրան, իսկ Ազատը դաշոյնի հարուածով վերջ է տալիս իր կեանքին:

Իրական կեանքի մէջ կարող են պատահել այդպիսի դէպ-քեր և մեր մամուլի մէջ յաճախ պատահում են գաւառական թղթակցութիւններ, որոնց մէջ արձանազրուած են լինում ան-չափահանների պասկը ծերունիների հետ, սակայն ոչ ոք բար-նաստեղութիւն» չէ համարում այդ թղթակցութիւնները: Ան-շուշտ ինդիրը չէ փոխում այն բանից, որ Տէր-Ղազարեանը ճիգ է թափել անտաշ ոտանաւորի ձևով «պատմել դէպը բառ առ բառ»: Այդ անտաշութեան մասին արդէն գաղափար է տալիս վերև բերած կտորը, բայց մի նմուշ էլ դնենք այստեղ, ողբալու համար հայ «բանաստեղծի» երաժշտական անձաշա-կութիւնը.

Փնտուղների դէմ բողոք բարձրացրեց,  
Վախկոտ հայեցքով միոքը բացատրեց,  
Բայց նոցա սրտերն նա չըթափանցեց,  
Ոչ մի շրթոնքից բնաւ չլսուեց  
Գէթ մի իրախուանք, այլ և նախատուեց,  
Որ աւանդական հայ կնոշ օրէնքներ  
Նոր տհասութեամբ ոտնատակում էր...

«Եր տհասութեամբ ոտնատակում է» և ինքը «բանաստեղ-ծը» բանահիւսութեան ամենատարրական օրէնքները...

Այդ պօէմայի մէջ չէ կարելի գանել՝ ոչ Ղաղախի բնու-թեան ուրոյն նկարագիրներ, ոչ ժողովրդի տիպիկական նիստ ու կաց, ոչ «հերոսների» բելլեֆ պատկեր, այլ՝ խառնիխուռն, կցկտուր շաղկապած են իրար՝ զիտողութիւններ, մաքեր, զգաց-մունքներ, ուստի և ոչ մի ամբողջացրած տպաւորութիւն չէ կարող ստանալ ընթերցողը այդ տափակ ստեղծագործութիւնից:

Զը պէտք է մոռանալ, որ բանաստեղծական արտազրու-թեան համար պահանջում է նախ և առաջ հոգեկան գործու-նէութեան այն խորհրդաւոր յատկութիւնը, որ կոչւում է ձիրք:

Սստուածային այդ կայծից զուրկ է պ. Տէր-Ղազարեանցը: Սակայն ձիրքն էլ ինքն ըստ ինքեան դեռ բաւական չէ. այդ ձիրքը պէտք է զտուի, յզկուի, անցնելով լայն կրթութեան բովից: Մենք տեսնում ենք որ մի Բայրօն, մի Շիլլէր, մի Գեօ-թէ, մի Պուչկին իրանց ժամանակուայ հասարակութեան ամե-նազարգացած մարդիկն են, ամենալայն աշխարհայեցողութիւն ունեցող զրոյներ են: Իսկ մեր մէջ կարծում են, թէ մեր սե-մենարիաներում ստացած ողորմելի մտաւոր պաշարով և տիրա-ցուական ճաշակով կարելի է, նոյն իսկ առանց բնական ձիրքի, վեր կենալ և հարստացնել մեր խղճուկ գրականութիւնը... Այդ-

պիտով, այս, մեր գրականութիւնը հարստանում է, բայց... գրական բորբոսով և ոչ երկերով:

## I. U.

**32) «Թարգարի բարօգներ», թարգմ. ռուսերէնից Ս. Մ. Գաղարշապատ, 1901.**

Նայելով այս գրքին, տեսնելով որ դա մի հատոր է, բաղկացած 384 մեծ երեսներից, տպած մանր տպոերով, մեր առաջիսկոյն այն հացն է գալիս թէ՝ ինչո՞ւ մենք յետ ենք մնացել: Եթե էինք մնում մենք դարերի ընթացքում, յետ էինք մնում այն ժամանակ, երբ մեր շուրջը, մեր հարեանները գրական առաջդիմութիւն ունէին, երբ մենք, իբրև վաճառական ազգ, իբրև շատ թափառողներ, շատ նիւթական միջոցներ ունեցողներ, կարող էինք առջնից գնացողներից մէկը լիներ:

Այս յետամնացութիւնը ունի շատ պատճառներ. բայց զիմաւորներից մէկն այն էր, որ գրականութիւնը ժողովրդի հետ չէր զնում. գրականութիւնը մի նեղ նպատակի էր ծառայում, գրականութեամբ պարապողները ամենեին չէին ուզում իմանալ թէ ինչ է կատարելում աշխարհում և ինչ մտաւոր սընունդի է կարօտ ժողովուրդը: Այն ժամանակ, երբ վրաց արքայորդի Դաւիթը վրացերէնի էր թարգմանում Վօլտէրը, մենք գեր տպագրում էինք Թոմա Աքուինացու աստուածաբանական երեք հատորները կամ Տաթևացու հաստափոր քարոզագրերը: Մենք ունեցանք անթիւ ու անհամար աստուածաբանական գրուածքներ, ինքնուրոյն թէ թարգմանական, անթիւ աղօթագրքեր, մեկնութիւններ, բայց մի հատ կարգին աշխարհային գիրք, մի հատ աշխատութիւն, որ ժամանակակից առաջդիմութեան հետ տանէր ժողովրդի միտքը, պատրաստէր նրան հասկացող, ինքնամանաչ քաղաքացի լինելու, — մի հատ այդպիսի գիրք մեզանում հազուածիւտ երեսյթների շարքից էր:

Ահա ինչու յետ մնացինք: Մեր հոգու համար անթիւ ու անհամար գործեր, իսկ մեր մտքի, մեր խելքի համար—գրեթէ ոչինչ...

Մի և նոյնը և այժմ: Թափում են ահազին աշխատանք, ծախւում են դրամ և հրատարակում են ինչ... քարոզագիրք: Կարծէք շատ և շատ մեծ է այդպիսի գրքի կարիքը. կարծէք 1400 տարի հայր բացի քարոզներից, բացի հոգեշահ խրատներից ուրիշ մի բան արտադրել է և կարծէք մեր գրականութեան մէջ Դիոգինէսի լապտերով պէտք է որոնել մի այդպիսի գործ:

Խօսելով այսպէս, մենք, այն, չենք մոռանում որ պ. Ս. Մ.-ի թարգմանածը անգլիական նշանաւոր քարոզիչ և եկեղեւ-